Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1073 - Ն
որոշման

Ձ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Ձ Ն Ե Ր

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Պետական սեփականություն հանդիսացող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է գրահրատարակչական գործունեություն իրականացնող այն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, որոնք, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն, պետական սեփականություն հանդիսացող տարածքի անհատույց օգտագործման իրավունք ստանալու համար դիմելու պահին (այսուհետ՝ դիմելու պահ) նախորդ երեք տարվա ընթացքում չեն ունեցել, ինչպես նաև դիմելու պահին չունեն սեփականության իրավունքով իրենց պատկանող շենք, շինություն, տարածք (բացառությամբ բնակելի տարածքի):

2. Գրահրատարակչական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, ըստ սույն չափորոշիչների, անհատույց օգտագործման իրավունքով պետության կողմից տարածքներ են տրամադրվում միայն գրահրատարակչական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ

ձեռնարկատիրոջ կողմից նշված՝ պետական սեփականություն հանդիսացող շենքում ազատ տարածքների առկայության դեպքում:

3. Եթե մինչև սույն չափորոշիչների հաստատումը գրահրատարակչական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից պետական սեփականություն հանդիսացող՝ անհատույց օգտագործման իրավունքով նախկինում տրամադրված տարածքների մակերեսն ավելի քիչ է եղել, քան սույն չափորոշիչներով հաշվարկված հասանելի մակերեսներն են, ապա անհատույց օգտագործման իրավունքով նոր տրամադրվող տարածքն ավելացնելու պահանջը կարող է բավարարվել միայն տվյալ շենքում ազատ տարածքների առկայության դեպքում: Ընդ որում, տրամադրվող լրացուցիչ տարածքի մակերեսը սույն չափորոշիչներին համապատասխան հաշվարկելու ժամանակ հիմք է ընդունվում տվյալ տարածքում առկա ազատ սենյակի (կամ սենյակների) փաստացի մակերեսը:

4. Պետական սեփականություն հանդիսացող տարածքն անհատույց օգտագործելու իրավունքից օգտվելու համար գիրք հրատարակող՝ գրահրատարակչական գործունեություն իրականացնող իրավաբանական անձը և անհատ ձեռնարկատերը՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն դիմելու պահից հաշվարկված նախորդ երկու տարվա ընթացքում, յուրաքանչյուր տարվա կտրվածքով, պետք է ունենան միջին թվաբանական հաշվարկով առնվազն 5 աշխատող.

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն դիմելու պահին չպետք է ունենան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություններ.

3) դիմելու պահին նախորդող երկու տարվա ընթացքում պետք է հրատարակած լինեն տարեկան նվազագույնը 4 անվանում գիրք (յուրաքանչյուր գիրքը՝ առնվազն 5 մամուլ ծավալով և 300 օրինակ տպաքանակով).

4) անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին պայմանագրի կնքումից հետո պայմանագրով սահմանված ամբողջ ժամանակահատվածում պետք է պահպանեն սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված պայմանները:

5. Սույն չափորոշիչների 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը՝ վերջինիս գրավոր հարցման հիման վրա:

6. Սույն որոշման 4-րդ կետում նշված չափորոշիչներին համապատասխանող՝ գրահրատարակչական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին տրամադրվում է մեկ աշխատողի հաշվով՝ 5 - 7 քառ. մետր մակերեսով տարածք՝ ելնելով սենյակի փաստացի մակերեսից: Եթե ազատ տարածքների փաստացի մակերեսը թույլ չի տալիս ապահովել սույն կետում նշված նվազագույն չափերով տարածքի տրամադրումը, և գրահրատարակչական գործունեություն իրականացնող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը գրավոր ցանկություն է հայտնել անհատույց օգտագործման իրավունքով ավելի փոքր մակերեսով տարածք զբաղեցնելու մասին, ապա նրան կարող է տրամադրվել տվյալ պահին ազատ այնպիսի տարածք (տարածքներ), որը չի համապատասխանում սույն կետով տարածքի տրամադրման նկատմամբ սահմանված նվազագույն չափորոշչին:

7. Պետական սեփականություն հանդիսացող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով զբաղեցնող՝ գրահրատարակչական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը սեփականության իրավունքով անշարժ գույք (բացառությամբ բնակելի տարածքի) ձեռք բերելու դեպքում դրա մասին տեղեկատվություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

8. Պետական սեփականություն հանդիսացող տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին պայմանագիրը ենթակա է լուծման՝

1) սույն չափորոշիչների 4-րդ կետով սահմանված պայմանները խախտելու,

2) սույն չափորոշիչների 7-րդ կետում նշված հանգամանքն ի հայտ գալու,

3) մյուս պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ